

ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ
ՄԵՐԺՄԱՆ ԱՆՀԻՄՆ ՓՈՐՁԵՐԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ուղղագրությունը լեզվի՝ ընդունված ուղղագրական կանոնների ամբողջությունն է և, իբրև լեզվաբանական գիտաճյուղ, առավել մեծ գործնական դեր է կատարում կյանքում: Այն ժողովրդի ընդհանուր սեփականությունն է և, բնականաբար, մի կողմից եթե այդ կանոնների պարտադիր ու անշեղ կիրառում է պահանջում, ապա մյուս կողմից մերժում է ամեն մի կամայականություն: Եվ հենց դրանով պետք է բացատրել, որ այս վերջին մի քանի տարում ուղղագրության հարցի շուրջը ծագած պայքարը գնալով՝ ոչ միայն չի մեղմանում, այլև, ընդհակառակն, ավելի սուր բնույթ է ստանում և մինչև անգամ վտանգավոր դառնում:

Բանն այն է, որ նոր՝ ներկայումս մեղանում գործող ուղղագրությունը՝ խորհրդային կարգերի ծնունդ ու բռնադատում համարելով՝ ոմանք «տեսական» քարոզներից բացի նաև այսպես կոչված «մաշտոցեան» կամ «դասական» ուղղագրությունը գործնականում կիրառելու ուղղությամբ որոշակի քայլեր են անում. որոշ թերթեր ու ամսագրեր ուղղակի լույս են տեսնում հին ուղղագրությամբ, որոշ թերթեր ու ամսագրեր էլ «զգուշություն» են հանդես բերում և առայժմ հին՝ ավանդական ուղղագրության միայն առանձին տարրերն են որդեգրում ու գործածում...

Եվ թե՛ մեկը, թե՛ մյուսը այնքան լայն տարածում են գտել, որ նոր ուղղագրությամբ առաջնորդվող, նոր ուղղագրության պաշտպան մի շարք թերթեր ու հանդեսներ ևս զերծ չեն մնում գայթակղությունից և իրենց էջերում՝ երբեմն կամ հաճախ հողվածներ են տպագրում հին ուղղագրությամբ, խախտելով, բնականաբար, պետականորեն ընդունված այն որոշումը, որով պարտադիր է համարվում նոր ուղղագրության գործածությունը:

Այդպիսով, անխուսափելիորեն, ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության բնագավառում ստեղծվել է, կարելի է ասել, միանգամայն խառնակ այնպիսի իրավիճակ, որպիսին գոյություն ունեւ անցյալում, և որի մասին դեռևս 1906 թ. «Ընկեր» շաբաթաթերթում մի շարքային ուսուցիչ այսպես է արտահայտվել. «Ուղղակի մնում եմ ապշած, երբ մեր ուղղագրության մասին եմ մտածում: Տեր աստված, այս ի՞նչ քաոս է, որ մեր փքուն թերթերը, ամսագրերը, շաբաթաթերթերը, հանդեսները, մանկավարժները, վիպասանները և այլն, ստեղծել են մեզ նման հասարակ մահկանացուների համար. մեկը գրում է սիրով, մյուսը՝ սիրով, երրորդը՝ սիրով...» (№ 19):

Եվ այսօր ևս ուղղագրական նման կացություն է ստեղծվել այն պայքարի պատճառով, որ մղվում է նոր ուղղագրության դեմ իբրև թե 1922 թ. բռնադատումը վերացնելու, «մաշտոցեան» կամ «դասական» ուղղագրությունը վերականգնելու և նրանով առաջնորդվելու նպատակով: Այս ուղղությամբ առանձնապես մեծ ճիգեր է գործադրում «բազմագիտակ» Ռ. Իշխանյանը, որը ամենից առաջ, ամենուր ու համառորեն այն կեղծիքն է տարածում, թե հայ նոր գրական լեզուն անցյալում ուղղագրական բարեփոխության ոչ մի կարիք չի զգացել և նման պահանջ երբեք չի առաջադրել, թե «1922 թ. ուղղագրական փոփոխությունը կատարվել է հայ ժողովրդից և հայ մտավորականությունից զաղտնի», «մի երկու հոգու ջանքերով», թե նոր ուղղագրությունը խորհրդային բռնադատում է եղել, մեծագույն հարված է հասցրել հայ մշակույթին, ազգային դպրոցին և անպայ-

ման պետք է մերժվի և «վաղ թև ուշ» փոխարինվի «մաշտոցեան» կամ «դասական ուղղագրութեամբ»:

Նման արտառուց «մեկնաբանություններով» իշխանյանը բացեիրաց խնդարթորոտ է պատմական փաստերը, ամեն կերպ ջանում ստի միջոցով մոլորեցնել, թյուրիմացության մեջ ղցել բոլոր նրանց, ովքեր ծանոթ չեն հայ նոր գրական լեզվի ուղղագրության պատմությանը և այն վեճերին, որ ծավալվել են 1922 թ. ուղղագրության ռեֆորմից էլ առաջ:

Հայ նոր գրական լեզվի ուղղագրության պատմությանը շատ թև քիչ ծանոթ ամեն ոք գիտի, որ նրա բարեփոխության անհրաժեշտությունը վաղուց է զգացվել, և այդ խնդրով մտահոգվել են հայ մշակույթի այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք են, ասենք, Գ. Ավետիսյանը, Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Գ. Ախվերդյանը, Գր. Օտյանը, Ա. Այալյանը, Ն. Ռուսինյանը, Խ. Ստեփանյանը, Գր. Արծրունին, Ղ. Աղայանը, Ստ. Մանգինյանը, լեզվաբաններ Ս. Սարգսյանցը, Ստ. Մալխասյանցը, Մ. Արեղյանը և շատ ուրիշներ: Բնդ սրում՝ ինչպես տեսականորեն ու դործնականորեն, այնպես էլ կա՛մ միայն տեսականորեն, կա՛մ միայն գործնականորեն նրանք աշխարհաբար ուղղագրության բարեփոխումն ու բարելավումը միանգամայն անհրաժեշտ ու օրինաչափական երևույթ են համարել և ուղենշել, որ այն պետք է իր սեփական ուղղագրությունն ունենա, և որն էլ, բնականաբար, չի կարող ամբողջապես նույնական լինել գրաբարի ուղղագրությանը և ինչ-ինչ չափով շտաբերվել նրանից:

Խոսելով վեճագրության և դրա՝ աշխարհաբար լեզվին վերաբերելու մասին, Ստ. Մալխասյանցը, օրինակ, դեռևս 1910 թ. միանգամայն տեղին նշել է, որ «Գրաբարն ունի յուր ուղղագրությունը, որին մենք ձեռք տալու իրավունք չունենք» (ընդգծումն իմն է—Ա. Մ.): Սրանով, բնականաբար, ստեղծվում է երկու ուղղագրություն—ավանդական՝ գրաբարյան, և նոր՝ աշխարհաբարի համար: Բայց սա ո՛չ ցավալի է և ո՛չ զարմանալի՝ նույնպես են վարվել և ուրիշ լեզուները. իտալացու ուղղագրությունը նույնն է արդյոք, ինչ որ լատիներենին էր ... Ինչու՞ ուսը, վրացին և այլն պետք է ունենան տարբեր ուղղագրություններ իրանց գրաբարի և աշխարհաբարի համար, իսկ մենք անկաբեղի համարենք, դեռևս ունենալ՝ երբ կա՛րիքն այսօր ստիպում է» (ընդգծումն իմն է—Ա. Մ.):

Աշխարհաբարի կամ հայ նոր գրական լեզվի ուղղագրությունը, սակայն, ավելի համակողմանիորեն է բնութագրել մեծանուն հայագետ-լեզվաբան Մ. Արեղյանը՝ 1913 թ. հոկտեմբերի 14-ին էջմիածնում հայոց գրերի գյուտի համազգային մեծ հոբելյանի հանդեսի ժամանակ կարդացած «Մեր ուղղագրության մասին» զեկուցման մեջ, որը տպագրվել է «Արարատ» ամսագրի նույն տարվա 11—12-րդ համարներում և արտատպվել 1985 թ.՝ նրա «Ծրկերի» 8-րդ հատորում: Մ. Արեղյանը ուղղագրության հարցը այդտեղ քննում է հայ գրական լեզվի պատմության հետ սերտորեն շաղկապված և գիտականորեն հիմնավորում, որ «ամեն գրական լեզվի համար միակերպ քերականության հետ անհրաժեշտ պայման է նաև միակերպ ուղղագրությունը» (ընդգծումն իրենն է—Ա. Մ.), որ ուղղագրության խնդիրը «գրաբարի և աշխարհաբարի մեծ վեճի» անմիջական շարունակությունն է, որ «Մեր ուղղագրությունը ևս միշտ փոփոխության մեջ է եղել», որ ուղղագրական փոփոխությունները, այնուամենայնիվ, խիստ զգուշորեն են պահանջում և պետք է կամ կարող են իրագործվել բացառապես գիտական հաստատուն հիմնավորմամբ: Ի պատիվ հենց Մ. Արեղյանի պետք է ասել, որ նա լայնաբեր է վարվել է գործնականում, գտնելով և քանիցս շեշտելով, որ ուղղագրության մեջ «կարելի չէ ոչ մի փոփոխություն մտցնել հիմնված լոկ մի որևէ տեղական արտասանության վրա, այլ միայն՝ ընդհանուր գրական արտասանության վրա», որ «բաղաձայնների հին ուղղագրությունն անձեռնմխելի պիտի մնա», որ ուղղագրական փոփոխությունը այնպիսին պիտի լինի, որ շաղարտի բառի ընդհանուր պատկերը:

Նվ այն առաջարկները, որ արել է Մ. Աբեղյանը 1913 թ., և կամ՝ որոնք կյանքում կիրառություն են գտել 1922 և 1940 թթ. ուղղագրական բարեփոխություններով, լիովին համապատասխանել են այդ պահանջներին, հայերենի ուղղագրությունը դարձնելով իրո՞ք ավելի կուռ ու միակերպ։ Նվ հետեւաբար՝ բոլոր նրանք, ովքեր հակառակն են անդում, ուղղակի սպեկուլյացիա են անում և հերթական կեղծումը կատարում, ասելով, թե հայերենի ուղղագրությունը ոչ թե բարեփոխվել է ու դյուրացել, այլ, ընդհակառակն, աղճատվել է ու աղավաղվել։ Բայց այժմ նաև փորձ է արվում ժխտել պատմական այն կարեւոր իրողությունը, որ հայերենի ուղղագրությունը նախքան 1922 թ. ունեցած իր մեծ նախապատմությունն է ունեցել, որը և ոչ ոք իրավունք չունի անտեսել։ Մինչդեռ Ռ. Իշխանյանը, նրա համախոհները կամ նրա պես մտածողները ոչ միայն այդ են անտեսում, այլև բանն այնպես են ներկայացնում, թե իբր 1922 թ. ուղղագրության ունեցած տեղի է ունեցել հայկական դրից լատինական դրին անցնելու համար, և կամ՝ «հասական ուղղագրությունը հրամանով խաթարվել է լատինական այբուբենին անցնելու մենամիակ նպատակով»։ Դա, սակայն, ինչպես առիթ ենք ունեցել նշելու մի քանի այլ հոգվածներում, բացահայտ զրպարտանք է, որով Իշխանյանն առանց անհարմար դժգուհ փորձում է ցեխ շարտել հայագիտության վիթխարի կադունու՝ Մ. Աբեղյանի անվան վրա։ Ընդ որում նա այդ անում է ոչ թե ինքնուրույնաբար, այլ, ինչպես դարձյալ նշվել է, հետեւելով զուտ գրականագետ Պողոս Մակինյանին, որը, համաշխարհային հեղափոխության հաղթանակի սին գաղափարով համակված, 1922 թ. ուղղագրության ունեցած մասին խիստ բացասաբար է արտահայտվել այն ընդունվելուց ավելի բան երկու տարի հետո «Заря Востока»-ում (№ 740) տպագրած «Լատինական գրի մասին» հոդվածում և որի՝ լատինական գրին անցնելու անհեթեթ տեսակետն էլ ժամանակին Ստ. Մալխասյանցը, իսկ հետագայում հենց ինքը՝ Մ. Աբեղյանը խստորեն քննադատել ու զավեշտական են համարել։ Մինչդեռ Ռ. Իշխանյանը ընթերցողից խորամանկորեն և՛ այդ է թաքցնում, և՛ Մ. Աբեղյանին բավական հանցալից մեղադրանք է ներկայացնում, որպեսզի հավաստի, թե իբր 1922 և 1940 թթ. ուղղագրական փոփոխություններով քանդվել է նաև հայոց լեզվի ուղղագրության ամբողջական շենքը, անջրպետ է ստեղծվել մինչև 1922 թ. ու դրանից հետո գործածվող ուղղագրությունների միջև, և ժողովուրդը զրկվել է անցյալի գրական ժառանգությունից օգտվելու հնարավորությունից։

Բայց դա ևս բացահայտ կեղծիք է և ամենևին իրականությանը չի համապատասխանում. 1922 և 1940 թթ. հայերենի ուղղագրության մեջ, ինչպես հայտնի է, կատարվել են մի 10—12, այն էլ, անշուշտ, անհրաժեշտ, փոփոխություններ, որոնք չէին կարող խարխել և չեն էլ խարխել նրա հիմքերը։ Իսկ սա նշանակում է, որ 1922 թ. ոչ թե ինչ-որ մի նոր, մինչ այդ գործածվող աշխարհաբարյան ուղղագրությունից արմատապես տարբեր, այլ այնպիսի ուղղագրություն է ստեղծվել, որ թերևս պայմանականորեն կամ պարզապես ի տարբերություն հին կամ գրաբարյան ուղղագրության է նուրբ կոչվում։

Հիշեցնենք, որ այդ նոր ուղղագրությամբ վերացվել է վ-ու-ւ եռագրության անմիօրինակությունը, բառասկզբում ճ լսվող յ-ն փոխարինվել է ճ-ով, եա, ոյ, իւ, եօ երկբարբառային գրությունները՝ յա, ույ, յու, յք երկհնչունային գրություններով, բառամիջի և բառավերջի է-ն՝ ե-ով, բառամիջի օ-ն՝ ո-ով, մերժվել է բառավերջում գրվող, բայց չարտասանվող յ-ն։

Իսկ դրանք անվիճելիորեն արևելահայ գրական լեզվի ոգուց ու էությունից բխող ուղղագրական փոփոխություններ են, որոնք և, ինչպես 1922 թ. մարտի 4-ին ընդունված դեկրետի սկզբում է ծանուցվում, հետապնդել են «Ժողովրդական լայն խավերի համար հայերենի գրագիտության ուսումը հեշտացնելու, ընդհանուր կրթությունը բարձրացնելու և դպրոցը՝ ուղղա-

գրություն սովորելիս գործ դրած անպետք և ապարդյուն ժամավաճառություններից և աշխատանքից ազատելու նպատակով:

Բայց չափ ու սահման չճանաչելով՝ արդյան ուղղագրությունը մերժողները ոչ միայն այդ են ժխտում, այլև այն «տեսակետն» են քարոզում, թե իրր խորհրդային շրջանում հենց խորհրդային ուղղագրություն է ստեղծվել, որով էլ սեպ է խրվել արևելահայերենի և արևմտահայերենի միջև, հայ ժողովրդի արևելյան հատվածը՝ արևմտահայ, իսկ արևմտյան հատվածն էլ արևելահայ մշակույթին է անհաղորդակից դարձել: Այնինչ իրականում դա ևս կեզծի՛ է, որը հորինողները չեն գիտակցում կամ չեն ուզում գիտակցել, որ հայ ժողովուրդը պատմական կյանքի դառը հանգամանքների բերումով մեկի փոխարեն գրական լեզվի երկու ճյուղ ունի, որոնք, ընդհանրություններից զատ, քերականական, հնչյունական և անգամ բառային բնույթի տարբերություններ են դրսևորում միմյանց նկատմամբ:

Այստեղից էլ հետևում է, որ ուղղագրական տարբերությունները արևելահայերենի և արևմտահայերենի համար երբեք էլ որոշակի դժվարություններ չեն հարուցում և, օրինակ, ամենևին չի սխալվում սփյուռքահայ նշանավոր մտավորական Ռոպեր Ճպեճյանը, երբ ուղղակիորեն ասում է. «...հայաստանյան գրականության հետևելու մեջ արևմտահայ ընթերցողի դժվարությունը կու գա լեզվական, նամանավանդ հնչյունային տառադրությունը պատճառով (ընդգծումն իմն—Ա. Մ.) ու շատ ավելի նվազ չափով՝ նոր ուղղագրական բարեփոխությունն» (Խմբ. Տոքթ. Ռոպեր Ճպեճյան, Մտերիմ դրոյց՝ ուղղագրության հարցի շուրջ, Հալէպ, 1970, էջ 8—9):

Այսպիսով, միանգամայն պարզ է, որ արևելահայության ու սփյուռքահայության կամ ամբողջ հայերենի համար մի միասնական ուղղագրություն ունենալու հարցը մեղտեղ բերողները պարզապես շահարկում են այն և մեղանում գործող ուղղագրությունը փորձելով ստորադասել սփյուռքահայության ուղղագրությանը՝ մոռանում, որ հայ մշակույթի բուն կամ հիմնական կենտրոնը՝ մայր Հայաստանը՝ Հայաստանի Հանրապետությունն է, որտեղ էլ կիրառվում է մի այնպիսի ուղղագրություն, որը իրոք խարսխված է գիտական կուտ հիմքերի վրա, լիովին բավարարում է գրավոր խոսքի բոլոր պահանջները և ամենևին վերափոխման կարիք չի զգում:

Ակամայից հարց է ծագում. ինչու՞ գրական լեզվի արևելահայ ճյուղը գնալով լայն տարածում է գտնում արտասահմանում, սփյուռքի շատ վայրերում (ապացույց՝ արևելահայերենով տրվող ռադիոհաղորդումները), իսկ նրա համար կիրառվող ուղղագրությունը չի կարող համանման ընթացք ստանալ, մանավանդ որ առանձին թերթեր ու ամսագրեր վաղուց լույս են տեսնում հենց այդ ուղղագրությամբ:

Մեր միտքը առկախ թողնելով և առաջ գնալով՝ նշենք, որ նոր ուղղագրություն մի չհակառակորդները այդքանով բնավ չեն բավարարվում և մի այլ, թերևս ավելի ծանր, մեղադրանք են ներկայացնում. նրանք ամենուր քարոզում են, թե նոր ուղղագրությունը ոչ միայն խզում է առաջ բերել նաև անցյալի բազմադարյան և ներկայիս մշակույթի միջև, այլև աղճատել-աղավաղել է մեսրոպյան այբուբենը և նրա կազմից միանգամայն անտեղի հանել տալով -յունը՝ վերածվել, այսպես կոչված, «խորհրդահայ ծագություն»:

Այսպիսով, ինչպես դժվար չէ նկատել, նոր ուղղագրությունը մերժողները բացարձակապես ուղղագրական ոչ մի փոփոխություն չեն ընդունում և հանդես բերելով զուտ քարացած-ոսկրացած մոտեցում՝ անհիմն կերպով հին ու նոր ուղղագրություններն են հակադրում իրար, առաջինը համարում սրբություն, իսկ երկրորդը՝ խառնիճաղանջ, աղճատված, աղավաղված կամ նման մի բան: Եվ այնուհետև. միջոցների առաջ առհասարակ որևէ խտրություն չղնելով՝ նրանք մի այլ շահարկում էլ են կատարում. շարունակ երդվում են Մեսրոպ Մաշտոցի անունով և աշխատում ամեն կերպ համոզել, թե նոր ուղղագրության մերժումը հենց մաշտոցյան, հայոց բազմա-

դարյան, դասական ուղղագրության պաշտպանություն ու վերականգնում է. նշանակում, և իրենք էլ ահա անձնվիրաբար այդ ազգափրկարար ու սուրբ գործին են ծառայում:

Այնինչ իրականում դա մարդկանց աչքերին թող փչելու մի հնարանք և՛ այնպիսի կեղծիք է, որ իրապես ո՛չ թե մաշտոցյան կամ դասական ուղղագրության պաշտպանության օգտին, այլ նրա դեմ է ուղղված: Մաշտոցը, ինչպես հայտնի է, հայոց այբուբենը ստեղծել է «մի հնչյունին՝ մի գիր» սկզբունքով, որին և համապատասխանել է գրաբարյան՝ դասական ուղղագրությունը: Բայց հայոց լեզվի զարգացման ընթացքում, նրա հնչյունական կազմում կատարված փոփոխություններով պայմանավորված, այն չէր կարող միշտ նույնը մնալ և ինչ-ինչ փոփոխություններ չկրել: Եվ պետք է ասել, որ 1922 և 1940 թթ. հայերենի ուղղագրության մեջ հենց այդպիսի փոփոխություններ են կատարվել, և, ասենք, եթե Մաշտոցը կենդանի լիներ, անշուշտ, կպահանջեր ե ա, ի ւ, ո յ երկբարբառները գրել յա-ով, յու-ով, ույ-ով, բառակազմում լսվող յ-ն՝ ն-ով, միատեսակ հնչվող ե-ն և է-ն՝ միեւնույն տառով, չհնչվող յ-ով վերջացող բառերը՝ առանց դրան և այլն:

Եվ այս դեպքում ևս չի սխալվում դոկտոր Ռ. Ճեպեճյանը, որ սփյուռքահայության համար ընդունելի համարելով «արեղյանական» ուղղագրությունը, դա մաշտոցյան է համարում և ուղղակի ասում՝ «Մանուկ Աբեղյան մեքոպյան է հարյուր տոկոսով» (տե՛ս նշված գրքույկը, էջ 16): Մինչդեռ, չգիտես ինչու՞ և ի՞նչ իրավունքով, Ռ. Խոսանյանն ու նրա հետ ոմանք հակառակ են պնդում և իրականում, պատմական փաստերի ու իրողությունների դեմ գնալով, ուղղագրության հարցն էլ առաջին հերթին ոչ թե իբրև լեզվական-գիտական, այլ գերազանցապես իբրև «ազգային-քաղաքական» հարց են քննության առնում:

Եվ ամենևին ոչ պատահականորեն այդ տեսանկյունից ուղղագրության փոփոխությունը կապելով զուտ խորհրդային կարգերի հետ և դրանց խեղված ծնունդը համարելով՝ նրանք թունդ հարձակումներ են գործում նոր ուղղագրության վրա, պարսավում և անպատշաճ պիտակներով ծաղրում այն:

Բայց, ինչպես ասում են, ստի ճանապարհը կարճ է, և նոր ուղղագրության մերժման համար նրանց բերած մյուս «փաստարկներին» պես այդ «փաստարկը» ևս կեղծ է, սնանկ ու մերժելի:

Եվ եթե մարդիկ կան, որոնք կարծում են, թե ներկայիս ուղղագրությունը ավանդական՝ սփյուռքում գործածվող ուղղագրությամբ փոխարինվելով, երկու հայ գրական լեզուները մի միասնական գրական լեզու կդառնան, և կամ նրանով ինչ-որ «ազգային-քաղաքական» հարց կարող է լուծվել, չարաչար սխալվում են: Ավելացնենք, որ չարաչար սխալվում են և՛ նրանք, որոնք մերժում են նոր ուղղագրության ինքնությունը և չեն գիտակցում կամ չեն ուզում գիտակցել, որ հին ու նոր ուղղագրությունները բնավ էլ անջրպետված չեն իրարից, որ գրագետ մարդու համար դրանք բնավ էլ դժվարություն չեն ներկայացնում, որ ազատորեն արևմտահայ գրականությունը հրատարակվում է նոր, արևելահայ գրականությունը՝ ավանդական ուղղագրությամբ, և ինչպես մեկը, այնպես էլ մյուսը լավագույնս են կատարում իրենց գործառույթն ու դերը:

Այստեղից հետևում է, որ ինքնին անիմատ է ու մերժելի հին ու նոր ուղղագրությունների հակադրումը, և բոլոր նրանք, ովքեր այդ տեսանկյունից փորձում են մերժել նոր ուղղագրությունը և այն փոխարինել հնով, կամ թե ակամա ու անխուսափելիորեն շփոթ են ստեղծում հայոց լեզվի ուղղագրության բնագավառում և վնաս պատճառում ժողովրդի համընդհանուր գրագիտության շատ կարևոր գործին:

Ահա թե ինչու՞ պետք է դատապարտվեն դրան նպաստող բոլոր տեսակի գործառնություններն ու քայլերը, որոնք գնալով ավելի են ծավալվում ու վտանգավոր դառնում, հանգամանք, որը իր հերթին ցույց է տալիս, թե ուղղագրության հարցը մեզանում տարերայնության, խիստ անուշադրու-

թյան է մատնված, և Հանրապետության լեզվաբանական կենտրոններն էլ տրեկլտհայ դրական լեզվի ուղղագրության միասնականության պահպանման և ժողովրդի ընդհանուր գրագիտական մակարդակի բարձրացման հարցերով հարկ եղած չափով չեն զբաղվում: Իսկ է, թե այս դեպքում ուղղագրության հարցի շուրջը ծավալված պայքարում բացահայտ անդիմություն է դրսևորել նաև ՀՀ նախարարների խորհրդին առընթեր Տերմինաբանական կոմիտեն:

Այսպիսով, ասպարեզը հիմնականում թողնվել է արդի ուղղագրությունը մերժողներին, որոնք այսօր էլ «մաշտոցյան» կամ «ղասական» ուղղագրությունը վերականգնելու և իբր դրանով ազգափրկարար գործ կատարելու կարգախոսով շարունակում են քարկոծել ինչպես «նոր» ուղղագրությունը, այնպես էլ նրա պաշտպաններին: Ընդ որում անվերջ կրկնելով նույն կեղծիքները և լուտանքները, նրանք ամեն կերպ ջանում են հասարակական կարծիք ստեղծել և ցույց տալ, թե արդյան ուղղագրության մերժումը, և նրա՝ հնով փոխարինումը՝ ազգային մեծ կարեորություն են ներկայացնում, թե «մաշտոցյան» կամ «ղասական» ուղղագրության կիրառմամբ իսկ հնարավոր կլինի փրկել «մեր 1600-ամյա հարուստ դրական ժառանգությունը», վերականգնել «մեր ազգային դպրոցը», ապահովել հայոց լեզվի աննախընթաց զարգացումը, գրագիտության բարձրացումը, հայերի միասնությունը և այլն:

Բայց դրանք ես իրապես այնպիսի կեղծիքներ ու սնապարծ պատճառաբանություններ են, որոնցով նոր ուղղագրությունը մերժողները մի կողմից եթե ուզում են ասել, թե վերջին տասնամյակներում հայ ժողովրդի հաստատական-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքում բացառապես անկում է եղել, ապա մյուս կողմից էլ ուզում են հաստատել, թե անհրաժեշտաբար ու անխուսափելիորեն պետք է անցնել հին՝ ավանդական ուղղագրությանը:

Դա, սակայն, ինչպես հայտնվել է քանիցս, ինչպես գտնում են մասնագետ լեզվաբանները, ինչպես համոզված են մայրենի լեզվի ուսուցիչները, միանգամայն անհիմն, անհեթեթ առաջարկ-պահանջ է, որի իրագործման ուղղությամբ կատարվող գործնական քայլերը իրոք խառնաշփոթություն են առաջ բերում ուղղագրության բնագավառում և վնասում հանուրի գրագիտության հույժ կարևոր գործին:

Այսքանով, իհարկե, չենք ուզում ասել, թե ժամանակակից հայոց լեզվի ուղղագրությունը բացարձակապես անխոցելի է և ինչ-ինչ բարեփոխությունների կարիք չի զգում: Իհարկե, կան իրողություններ, կապված, օրինակ, օտար փոխառյալ բառերի, հատուկ անունների, կրկնաբարադասյանների, տառադարձումների, տողադարձի և այլն հետ, որոնք կանոնարկում, ճշգրտում և միաժամանակ նաև՝ դիտական որոշակի հիմնավորում են պահանջում:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ. Հայերենի ուղղագրության հարցը, որ շատ կարևոր նշանակություն ունի մեր մշակույթի բոլոր բնագավառների համար, վերջերս դարձել է լայն ֆենարկման առարկա: Առանց հիմնավոր փաստարկների առաջարկներ են արվում գործող ուղղագրությունը փոխարինել հին՝ գրաբարի ուղղագրությամբ: Մեր ժողովրդին հուզող այս հարցը ֆենարկվել է մի շարք գիտական հիմնարկներում և ուսումնական հաստատություններում: ՀԳԱ ընդհանուր ժողովում, ՀԳԱ պատմության ու տնտեսագիտության և փիլիսոփայության ու բանասիրության բաժանմունքներում, ՀԳԱ լեզվի ինստիտուտում, Սրեանի պետական համալսարանի ժամանակակից հայոց լեզվի և հայոց լեզվի պատմության ամբիոններում, Խ. Արսլյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնում և այլուր: Նշված բո-

յոր հիմնարկներում այն կարծիքն է հայտնվել, որ հին, գրաբարի ուղղագրությանը վերադառնալը անընդունելի է և հղի է յուրջ բացասական հետեւանքներով: Այս հույն կարծիքը պաշտպանել են Հանրապետության մամուլում նաև նանաչված մասնագետներ Բ. Ջահուկյանը, էդ. Զրբաշյանը, Լ. Հախվերդյանը, Ա. Մարգարյանը, Մ. Ասատրյանը, Պ. Շարափխանյանը և ուրիշներ:

Զպետք է մոռանալ, որ ավանդական ուղղագրությունը մեր հին լեզվի ուղղագրությունն էր, և այսօր չի կարող բավարարել արդի հայերենի պահանջները ո՛չ գիտական, ո՛չ հնչյունական համակարգին համապատասխանության, ո՛չ էլ ուսուցողական տեսակետներից: Մինչդեռ գործող ուղղագրությունը լիովին համապատասխանում է արդի հայերենի առանձնահատկություններին և լավագույնս ծառայում է մեր լեզվին:

«Հանդեսի» խմբագրությունը ևս ուղղագրության փոփոխության պահանջը լիովին մերժելի է համարում: